№—202 ԿԻՐԱԿԷ 4 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1881

Հրատարակվում է ամեն օր բացի երկուշաբթի եւ տօն օրերից։
Տարեկան գինն է 10 ռուբլի։
Առանձին համարներով ւրաքանչիւրը 5 կոպ.։

Խմբագրատունը բաց է ամեն օր բացի կիւրակէ եւ տօն օրերից առաւօտեան 10—2 ժամը կէսօրից յետ։

Յատուկ յանձնարարութիւններ ղրկում են ուղղակի խմբագրութեան հետեւեալ հասցէով. Въ редакцію газеты «Меду Айастана», въ Тифлисъ, կամ Rédaction de «Meghou Haïastani» à Tiflis (Caucase).

Խմբագրութեանս ուղղած թէ՛ յօդուածները եւ թէ՛ նամակները պէտք է պարզ գրուած լինին գրողի ստորագրութեամբ եւ հասցէով։ Խմբագրութիւնը կարող է փոփոխել, ուղղել եւ կրճատել յօդուածները։ Խմբագրութիւնը իւր վերայ չէ առնում յետ ուղարկել յօդուածները եւ պահում է երկու ամիս մինչեւ ցպահանջ։

Յայտարարութիւնների համար վճարում են ամեն մի բառից 1½ կոպէկ։
Յայտարարութիւններն ընդունվում են խմբագրատանը եւ պ. Շահվերդեանի պաւիլիօնում։
Յայտարարութիւնները ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով։

ՇԱՒԱՍՏԱՆԻ

ՔՍԱՆԵՒԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Հնգամեայ ընդմիջումից յետ ԱԶՔՈՎ ՀԻԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՔԸ դաջաոր Ռէչիցայի մօտ **ՎԵՐԱՆՈԳՎԱԾ ԵՆ** հոկտեմբերի 3-ից։ Ընդունելութիւնք լինում են առաւօտեան 9—10 ժամը ամեն օր եւ կէսօրից յետ 5—7 ժամը երեքշաբթի, հինգշաբթի եւ շաբաթ օրերը։ Հասցէն նախկինն է. Աբսէնալնայա փողոց, տուն № 17։

Անվարձ այցելութիւնը լինում է բուժարանում (լէչէբնիցա)։ 1—3

Անտա Սոլոմոնովնա Իպմայիլեանց, Նինա Սոլոմոնովնա Ասլամազեանց, Գէորգ եւ Իսահակ Սոլոմոնովիչ Ազիմեանք յաւէտ սրտի ցաւով իրանց մօր՝ **ՍՈՓԻԱ ԱԼԷՔՍԷԵՎՆԱ ԱՔԻՄԵԱՆՑԻ** մահը, որ տեղի ունեցաւ ամսոյս 2-ին առաւօտեան 5 ժամին, խնդրում են ազգականներին եւ բարեկամներին չնորհ բերել հանգուցեալ յուղարկաւորութեան իւր բնակարանից, որ Վէլեամինովկի փողոցում պ. Քաթանեանցի տանն է, Մողնու սուրբ Գէորգ եկեղեցին 4-ին հոկտեմբեր այսօր կիւրակի, առաւօտեան 10 ժամին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Ազգայինը.— Հայք.— Թղթակցութիւն Մելիտօպոլից։
Քաղաքականը.— Անգլիա՝— Քաղաքական լուրեր։
Մի գուբի հնարագիրներ։
Մանր լուրեր։
Յայտարարութիւններ։
Ֆելիետօն։

ԱԶԳԱՅԻՆ

ՀԱՅՔ

Ֆրանսայի կազէթը հետեւեալ տո

ղերը կը գրէ.

«Հրատարակեալ պաշտօնական վիճակագրութեան մը նայելով, վանայ, կարնոյ, Սկեռատիոյ, խարբերդի, Տիգրանակերտի եւ Հալէպի գաւառները որք Հայաստան կոչուած երկիրը կը կազմեն, եւ Փիւրտիստանի Թուրքերը 1,831,000 արու բնակիչ ունին, որոյ 780,000ը Հայ, 23,000ը Յոյն, 251,000ը Ասորի, Նեստորական եւ Կաթոլիկ, 32,000ը Ցաճիկ կամ տիրող ցեղին ներկայացուցիչները, 380,000ը Քիւրտ եւ Եւրիւք (երկու Թափառիկ ժողովուրդք) եւ 76,500ը զանազան ազգեր են, ինչպէս են Չէրքէզ, Վիրք, Թաթար, Հրէայ եւլն։

«Այդ պաշտօնական վիճակագրութենէն յայտնի կերեւի թէ Հայք մեծաւ մասամբ յիշեալ գաւառները կը բնակին։ Քիւրտերը արդարեւ Հայաստանի հարաւային կողմը բազմաթիւ են եւ եթէ Սեբաստիայէն եւ Տիգրանակերտէն մինչեւ Պայազիտէն գծենք տարածուող ցեղերը ճշդիւ համարել պէտք ըլլայ, պիտի տեսնուի որ 500 հազար ընտանիք այսինքն 2,500,000 անձ կայ ամենքն ալ շէյխ Ուպէյտուլահի իշխանութիւնը ճանչցող որ այժմ Սուլթանին հիւրն է։

«Ոչ անօգուտ է նաեւ նշանակել ուրիշ վիճակագրութիւն մը որ աշխարհիս վրայ գտնուած Հայոց ամբողջ թիւը կը ցուցնէ։ Ռուսական Հայաստան եւ Վրաստան եւ Տուիֆասի միւս գաւառները բնակող Հայոց թիւն է 1,100,000։ 1830 ին Ռուսահայոց թիւը 500,000 ը չէր անցներ։ 1940—45 ին նոր գաղթականութիւնք ըլլալով, այս թիւը 800 հազարի հասաւ եւ այսօր մէկ միլիոնէն աւելի է։ 1877 ին ռուսական բանակը երեք Հայ զօրավար ունէր, որոց երկուքը Լորիս Մելիքով եւ Տէր Ղուկասով, անուանի հանգիսացան։

«1879—1880 ի ահաւոր սովը մանաւանդ Հայոց մէջ մեծ զոհեր առաւ որոց թիւը դեռ յայտնի չէ։

«Կը հաւատան այսօր թէ ամբողջ Ցաճկաստանի Հայոց թիւն է 1,800,000, որոց 300 հազարը ի Պօլիս եւ եւրոպական Ցաճկաստան, 720 հազարը Կիլիկիա, Սիրիա եւ Փոքր-Ասիա, եւ 700 հազարը բուն Հայաստանի եւ Փիւրտիստանի հիւսիսային մասին մէջն է։

«Ըստ այսմ, աշխարհիս երեսը գըտնուած Հայոց թիւն է 2,970,000 որուն 700 հազարը Պարսկաստան եւ Հնդկաստան, քանի մը հարիւրը Անգղիա, Գաղղիա եւ այլ տեղեր կը բնակինեն։

ՄԵԼԻՏՕՊՕԼ

5 սեպտեմբերի.

(Թղթակցութիւն «Արեւու Հայաստանի» լրագրի)

Շատ ցաւալի է ինձ որ մեր Հայոց ազգը գրեթէ շատ տեղ եւ մինչեւ ցայսօր, փոխանակ առաջ գալու ետ ճնացած է գէթ իրեն մայրական լեզուն սորվելու, բայց եթէ գրժբաղդաբար Մելիտօպոլու վրայ խօսիմ, առաւել պիտի ցաւիմ, վասնզի սորա հասարակութիւնը բոլորովին զուրկ մնացած է այն ամենայն հարկաւոր նիւթերէն, որք անհրաժեշտ են նոցա համար. նախ ժողովուրդք տեղւոյն ըստ մեծի մասին անմիաբան, քահանայն ծերունի եւ անուշադիր, երեսփոխանն անկիրթ, դպիրն տկարամիտ, զայօչէքն դորոզ։ Երկրորդ, շատ տարիներէ իվեր դպրոցին փակուած է, թէեւ դպրոցի հոգաբարձութիւնը կը շարունակուի մինչեւ ցարդ, եւ Հայոց մանկտիք դատարկ փողոցներումը ժուռ կուգան, ժողովուրդք ոչ թէ միայն անուշադիր են այս հոգեւոր պարտականութեան, այլ չեն աշխատիր գէթ ամենահասարակ խնդրել նորին սրբազնութեան վիճակային առաջնորդին, որ կարող է կատարել ամենայն ինչ. երեխայք մինչ այն աստիճան վայրենի դարձած են, որ եկեղեցին ինչ ըլլալը անգամ չեն գիտեր, ուր եւ կերոն անգամ բռնող չըկայ։ Եւ երրորդ՝ երեսփոխանն այնչափ անուշադիր է իւր պաշտօնին եւ պարտականութեան, որ եկեղեցոյ բակը անտառ է դարձուցած, մէջտեղերը մեծամեծ փոսերով լի, այնպէս որ հազիւ մի ճանապարհ միայն ունի, եկեղեցւոյ դուռը գտնելու, իսկ մնացեալ տեղերը ինքնաբոյս վայրենի բարձր փուշերով լեցուն են, որոց մօտենալն անգամ անկարելի է։

Իմ կարծիքով եւ իմ խելքով

ՖԷԼԻԵՏՕՆ

Աչունքն եկաւ, եղանակը զովացաւ, մարդոց ոյժը կազդուրվեցաւ, երակները ղվկեցան, կիրքերը չարժեցան—էլի սկսաւ այն առածն արդարանալ, թէ կեանքն պատերազմ է, առանց սորա կեանքը անկեանք է, մահ է։

Ամեն տեղ կենդանութիւն է երեւում, ամեն տեղ եռանդ ու աչխոյժ է վայելում, մարդուս առօղջութեանը վկայում։ Աչնան այս կենդանարար կազդուրիչ ոյժը մինչեւ անգամ հնազիտական ժողովներում երեւեցաւ, թէեւ բոլոր նիւթը ժողովի հնութիւնից մնեւալ ժամանակից առնվեցաւ։ Ցանելու արժանի էր, թէ որպիսի եռանդով վխաբանում էին եւ միմեանց անխնայ չարդուփչուր անում գիտականները մի որեւէ գրամի համար, մի որեւէ բնկորի համար, առանց երկար մտածելու, թէ ասածը չարմար է, թէ ոչ։

Աչնքան ոգեւորութիւնն ու աչնանային եղանակի ազդեցութիւնը մեծ էր, որ մինչեւ իսկ հասակը նշանակութիւն չունէր։

Ցիրաւի եթէ աչունքը չը լինէր, խեղճ հնագէտների բանը բուրդ չէր, որովհետեւ առանց օդի կազդուրիչ զօրութեան անկարելի էր գիմանալ կերակուրների այն ծանրութեան ու բաղմութեան, որոնց տակ կը ճնշուէր Գէորգի-խանի փորը ու կը լքցուէր Շարայի որկորը։ Ամենայն օր չազ նախաճաչ, ծանր ճաշ ու մի քանի կերակուրներից բաղկացած ընթրիք—եկ ու գիմացիր դու ծերունու ու գիտնականի քնքոյշ փորիկ։ Կերածներն էլ ինչ—չխրթմա ու արտալ, բօրանի ու փլաւ—իւզալի, մէս տապակած ու ձուկը խաչած եւ այլ շատ տեսակ տեսակ կերակուրներ հաւնմած, քաղցր ու թթու, աղի ու կծու, ամենքըն էլ ստամոքսի համար աղուս։

Բայց ամենքն էլ չնորհիւ օդի զօրութեան մարսվեցան եւ վառք Աստուծոյ, որ հնագէտները առողջ վերադարձան եւ կովկասի հնութիւնքն էլ հանդիստ իրանց տեղերում անխախտ մնացին ու ինչպէս էին, դնջացան, ոչ իրանք չարժեցան եւ նոցա համար հաղարաւոր վէրստեր չափողներն անհանգստացան, իսկ պատահականութիւնք թղթի վերայ լիապէս կատարվեցան, ծախքերն էլ եղան ու գրվեցան։

Եղանակի ազդեցութիւնը միայն ուսումնականաց եւ գիտնականաց վերայ չէ երեւում, նա ամենքին էլ միապէս է կազդուրում ու զօրացնում, թէ քաղաքագէտներին եւ թէ հասարակ մահկանացուներին։

Այսօր աչնանը ամեն տեղ քաղաքական պատերազմ է, որովհետեւ կեանքը պատերազմ է, իսկ մարդիկ այժմ կենդանացել են եւ աչխուժացել, զօրացել ու կազդուրվել։ Ֆրանսիայում երկու բանակ է կազմված—Գամբէտտայի եւ Գրեվիի, որոնք անխնայ իրար մէս ուտում, միմեանց հայհոյում ու միմեանց տակը փորում, մամուլն էլ իրանց ղէնք ընտրում, որ իւր կողմից ոչինչ չէ խնայում, ամեն ըան անում, ամեն միջոց գործ դնում, որ իր կուսակցութեան յաղթութիւն տայ, նրան նշանակութիւնը բարձրանայ, զօրանայ եւ միրապետող դառնայ, որպէսզի իւր համախոհները տեղեր ստանան, պաշտօններ սեպհականեն եւ ի վառս ազգին եւ հայրենեայ գրամական էլ օգուտ ունենան։ Եւ այս ամենի համար ինչ միջոցներ մնում են որ գործ չը դնվին մամուլի միջնորդութեամբ, բամբասանք ու զրպարտութիւն, հայհոյանք ու չանդիմանութիւն, բարուրանք ու դատապրութիւն եւ ամեն տեսակ մեքենայութիւն, վերջ ի վերջոյ ամենքի զըբօչակն է ազնուութիւն եւ հայրենասիրութիւն, ոչոք չէ ասում չհասկրութիւն ու անճնասիրութիւն։

Գերմանիան—այն լուսաւոր ու քաղաքակրթեալ Գերմանիան նոյնպէս է ասպարէզ պատերազմի ու գուրգուրտքոյի, հայրենիք մարդկոցի—բազմաթիւ զօրանոցի—մի կողմում է երկաթեայ Բիսմարկն, միւս կողմում ազատամիտներն է չարքն,—կանգնած են երկու բանակներ, անում են չատ անքաղաքավարի հանաքներ։ Բիզմարկի կուսակցութեան վէն զուրկ մնացած է այն ամենայն հարկաւոր նիւթերէն, որք անհրաժեշտ են նոցա համար. նախ ժողովուրդք տեղւոյն ըստ մեծի մասին անմիաբան, քահանայն ծերունի եւ անուշադիր, երեսփոխանն անկիրթ, դպիրն տկարամիտ, զայօչէքն դորոզ։ Երկրորդ, շատ տարիներէ իվեր դըպրոցին փակուած է, թէեւ դպրոցի հոգաբարձութիւնը կը շարունակուի մինչեւ ցարդ, եւ Հայոց մանկտիք դատարկ փողոցներումը ժուռ կուգան, ժողովուրդք ոչ թէ միայն անուշադիր են այս հոգեւոր պարտականութեան, այլ չեն աշխատիր գէթ ամենահասարակ խնդրել նորին սրբազնութեան վիճակային առաջնորդին, որ կարող է կատարել ամենայն ինչ. երեխայք մինչ այն աստիճան վայրենի դարձած են, որ եկեղեցին ինչ ըլլալը անգամ չեն գիտեր, ուր եւ կերոն անգամ բռնող չըկայ։ Եւ երրորդ՝ երեսփոխանն այնչափ անուշադիր է իւր պաշտօնին եւ պարտականութեան, որ եկեղեցոյ բակը անտառ է դարձուցած, մէջտեղերը մեծամեծ փոսերով լի, այնպէս որ հազիւ մի ճանապարհ միայն ունի, եկեղեցւոյ դուռը գտնելու, իսկ մնացեալ տեղերը ինքնաբոյս վայրենի բարձր փուշերով լեցուն են, որոց մօտենալն անգամ անկարելի է։

Իմ կարծիքով եւ իմ խելքով

ղէնքն է չատ կոչտ ու կարուկ, իսկ նորա հակառակորդներինը քնքոյշ ն ճկուն—առաջնոյն է բուռն այժ, երկրորդներինը խօսք, որ գուչակում է գոյժ։ Նոյնն է եւ այլ չատ երկիրներում, Իտալիայում եւ Սպանիայում, ուր երկու երբեմն եւ երբեք եւ աւելի կուսակցութիւնք, անում են միմեանց թշնամութիւնք, յանուն իրաւանց չատ անգամ գործում են անիրաւութիւնք, արիւն չը կայ, բայց խօսքով պատերազմ ամենուրեք կայ։

Աչխարհս երբ կարգի կը գայ եւ ինչպէս հարկն է կը հանգստանայ, այդ խաղաղութեան կուսակցութիւնն կամ ընկերութիւնը կը գիտենայ, որ ամեն միջազգային վէճերը միջնորդական դատարանով վճռել կը ջանայ, բայց երբեմն եւ բացառութիւններ ընդունել կը տայ։ Օրինակ՝ Ֆրանսիայի համար Լոտարինգիայի հարցը բացառութիւն է. միջազգային չէ, ուրեմն գէնքով վճռելի է. Գերմանիայի համար Աւստրիայի գերմանական գաւառների հարցը բացառութիւն է, միջազգային չէ, գէնքով

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

Նշանաւոր «Nineteenth Century»

ՈՒՆԿԱՐՈՒԹԻՒՆ

Ե՛ս ոչ միայն չեմ ուրախանում, այլ ընդհակառակն, շատ եմ տխրում, երբ տեսնում եմ, որ մեր ազգի մէջ ոչ միայն ամենաչնչին, այլ և ամենամեծ երևոյթները, ինչպէս են, օրինակ, մեր ազգային ժողովները, ոչ մի ուրախութիւն չեն պատճառում, այլ միայն տխրեցնում են մեզ։ Ես ուրախ կը լինէի, եթէ մեր ազգային ժողովները ոչ միայն ազգին ոչ մի օգուտ չեն տալիս, այլ գոնէ վնաս էլ չտային